## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

**<< ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-ՄՔԾ/2025/Լ-62>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման և գնահատման նիստի**

**ք.Երևան** **<<27 >> 06.2025թ.**
**ժամը 10:00**

**ՕՐԱԿԱՐԳ.**

ՀՀ ՆԳՆ 2025թ. կարիքների համար շիթային տպիչների /CPV 30232150/502/ ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-ՄՔԾ/2025/Լ-62 ծածկագրով գնման ընթացակարգի 27.06.2025թ. բացման նիստում արձանագրվեց՝

ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-ՄՔԾ/2025/Լ-62 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետին /26.06.2025թ. ժամը 10:00/ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրել է «Ալֆա-Էտալոն» ՍՊԸ-ն:

**Հայտ ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները).**

| N | Հայտ ներկայացրած մասնակցի անվանումը | Հայտ ներկայացրած մասնակցի հասցեն, հեռախոսահամարը |
|---|---|---|
| 1 | Ալֆա-Էտալոն ՍՊԸ | ՀՀ, ք. Երևան, Տիգրան Մեծի 29ա, բն. 37<br>էլեկտրոնային փոստի հասցե - alfaetalonam@gmail.com<br>հեռախոսահամար 098 40-05-59 |

**Մասնակից/ներ/ի առաջարկված գները՝**

**ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ**

| Չափաբաժնի համար | Զբաղեցրած տեղ | Ներկայացված հայտեր | Նախահաշվային գին | Վերջին առաջարկ | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | Արժեք | ԱԱՀ | Գին |
| 1 | 1 | Ալֆա-Էտալոն ՍՊԸ | 60000000 AMD | 49999995 AMD | 20 % | 59999994.00 AMD |

**Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավեր սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.**

Մասնակից/ներ/ի ներկայացրած հայտ/եր/ը կազմված և ներկայացված են հրավերի պահանջներին համապատասխան,

ծրագրի կողմից ճանաչվում են որպես վավեր, և համակարգը թույլ է տալիս բացել հայտերը:

Մասնակից/ներ/ի կողմից ներկայացվել է Հրավերի ՄԱՍ 1-ի 7-րդ կետով պահանջվող հայտի ապահովումը, այն է՝ 7.1 Մասնակից հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում: Հայտի ապահովումը ներկայացվում է բանկայի երաշխիքի (հավելված 2) կամ կանխիկ փողի ձևով, որի չափը հավասար է գնման գնի հինգ տոկոսին:

**<u>Տեղեկություն ընթացակարգի ընթացքի մասին.</u>**

Հրավերի վերաբերյալ հարցում և պարզաբանում չի եղել:

<u>ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՈՐՈՇԵՑ.</u>

ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-ՄՔԾ/2025/Լ-62 ծածկագրով ընթացակարգի 1-ին չափաբաժնով նվազագույն գին առաջարկած «Ալֆ Էտալոն» ՍՊԸ-ին <u>ճանաչել ընտրված մասնակից</u>:

Համաձայն <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի՝ անգործության ժամկետ չի սահմանվում, քանի որ հայտ ներկայացրել միայն մեկ մասնակից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետներում «Ալֆա-Էտալոն» ՍՊԸ-ին՝ կառաջարկվի կնքել <u>շիթային տպիչներ</u> ձեռքբերման գնման պայմանագիր:

**Ընդունվեց որոշում՝ կողմ 3, դեմ 0:**

**Հանձնաժողովի <u>Նախագահ</u>՝**

ՀՀ ՆԳՆ ՄՔԾ պետի տեղակալ **Վ. Մաթևոսյան**

**<u>Հանձնաժողովի անդամներ</u>՝**

ՀՀ ՆԳՆ ՄՔԾ բնակչության պետական ռեգիստրի վարման բաժնի պետ **Վ. Նիկողոսյան**

ՀՀ ՆԳՆ ՄՔԾ բնակչության պետական ռեգիստրի վարման բաժնի ավագ մասնագետ **Ա. Հարությունյան**

**Քարտուղար՝**

ՀՀ ՆԳՆ ՏՎ ԳՀ բաժնի գլխավոր մասնագետ Լ. Սահակյան